

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/4

28 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Լիգա տրանս» ՍՊԸ 06.07.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 12.05.2015 թ-ի թիվ 551 որոշման դեմ:

«Լիգա տրանս» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ էրեբունու հարկային տեսչությունից ստացվել է 12.05.2015թ. թիվ 551 որումը, որի համաձայն «Լիգա տրանս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) 11.05.2015 թ-ի դրությամբ ունի չկատարված հարկային պարտավորություններ ԱԱՀ-ի գծով 1264824 դրամ, որը ենթակա է գանձման: Որոշման ներքևի մասում նշված է, որ որոշմանը կից ներկայացվում է առդիր մնացորդների մասին տեղեկանք, որն Որոշման հետ չի ներկայացվել: Եթե տեղեկանքը ներկայացվեր, ապա կերևար, ընկերության ըստ հարկային պարտավորությունների մնացորդների, ԱԱՀ-ի գծով ունի գերավճար 580.000 դրամի չափով:

«Լիգա տրանս» ՍՊԸ-ն օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում հարկային տեսչություն ներկայացրել է հաշվետվություններ ԱԱՀ-ի վերաբերյալ, որոնցում երևում է, որ ընկերությունը ԱԱՀ-ի գծով ունի գերավճար, որը գոյանում է այն պատճառով, որ ընկերությունը ունեցել է արտահանումներ և ներմուծումներ, որոնց համար վճարել է համապատասխան ԱԱՀ գումարներ: Այդ հաշվետվությունների վերաբերյալ հարկային տեսչությունից որևէ առարկություն չի եղել:

Այսպիսով, վերը նշվածից պարզ է, որ ՀՀ ՖՆ էրեբունու հարկային տեսչությունը առանց «Լիգա տրանս» ՍՊԸ-ի ԱԱՀ-ի հաշվետվությունների ուսումնասիրության կայացրել է որոշում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ընկերությունը խնդրում է ՀՀ ՖՆ էրեբունու հարկային տեսչությանը պարտավորեցնել կասեցնել 12.05.2015թ. թիվ 551 որումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետը, քննարկելով «Լիգա տրանս» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 11.05.2015թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են 1.264.824 դրամ, որից ապառք 1.228.026 դրամ, տույժ 25.863 դրամ, տուգանք 10.935 դրամ, որն առաջացել է հարկային տեսչություն ներկայացված ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման կամ անուղղակի հարկերից ազատման մասին ներմուծողի լրացված հայտարարությունով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի կողմից 12.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 551 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Լիգա տրանս» ՍՊԸ-ից 1.264.824 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ «Լիգա տրանս» ՍՊԸ-ի նկատմամբ Որոշմամբ գանձման առաջադրված հարկային պարտավորությունները՝ ընդհանուր գումարով 1.264.824 դրամ, առաջացել են 2015 թ-ի հունվար, մարտ, ապրիլ ամիսների «Ներմուծման հարկային հայտարարագրերի» (ԵՏՄ) հիման վրա առաջադրված հարկի գումարներից, ինչպես նաև վերջինիս նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառելու արդյունքում:

Ընկերության բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ Որոշումը կայացնելիս հաշվի չի առնվել ԱԱՀ-ի գծով գերավճարի առկայության հանգամանքը, նշվեց հետևյալը:

ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ ներկայացուցիչը նշեց, որ 11.05.2015 թ-ի դրությամբ ընկերության ԱԱՀ-ի գերավճարի նմացորդը (դեբետային) կազմել է 583.699 դրամ, որն առաջացել է 2014 թ-ի 3-րդ, 4-րդ և 2015 թ-ի 1-ին եռամսյակների համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով:

Տվյալ դեպքում, որպեսզի ընկերությունը կարողանար որևէ կերպ օգտագործել վերոգրյալ ԱԱՀ-ի գերավճարի մնացորդը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 1-ով սահմանված կարգով պետք է ներկայացվեր դիմում, որի հիման վրա իրականացվող ուսումնասիրության արդյունքում հնարավորություն կնձեռնվեր հետ ստանալ այդ գումարը: Բացի այդ, ԱԱՀ-ի գերավճարի մնացորդը կարող է հաշվի առնվել հետագայում իրականացվելիք գործարքների հետևանքով առաջացող կրեդիտային շրջանառության առաջացման դեպքում:

Սակայն, քանի որ նշված դեպքերից որևէ մեկը առկա չի եղել, ուստի Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների հաշվարկմանը ԱԱՀ-ի գերավճարի մնացորդը չի մասնակցել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 12.05.2015 թ-ի թիվ 551 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

